Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկությունները և դիտարկումները «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ սահմանադրական օրենքի վերաբերյալ

2020 թվականի հուլիսի 31-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթով որով նախատեսվում է ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատական համակարգ՝ առնվազն 25 դատավորի թվակազմով, որոնցից 20-ը կքննեն ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, իսկ 5-ը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացված դիմումներից և հայցապահանջներից բխող գործերը:

Ստորև ներկայացնում ենք ԻՀԱ-ի և Հայաստանի ՔՀԿ-ների կոալիցիայի առաջարկությունները և դիտարկումները վերոնշյալ փաթեթների համար:

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծ

Կարգավորում 1.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի (այսուհետ՝ Դատական օրենսգրքի նախագիծ) 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նախատեսվում է՝ «Օրենքի 89-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս, ըստ որի՝ *«3. Բարձրագույն դատական խորհուրդը հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով*

անցկացվող որակավորման ստուգման գործընթացին ***կարող է ներգրավել փորձագետներ****: Փորձագետների ներգրավման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:»»:*

Դատական օրենսգրքի նախագծի 21-րդ հոդվածի 13-րդ կետով սահմանված է. *«Որպես փորձագետ կարող են ներգրավվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն* ***3 տարվա*** *մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող երեք անձ:»*

Առաջարկ 1.1

Առաջարկում ենք վերանայել հիշյալ կարգավորումը և բացառել ԲԴԽ հայեցողական իրավունքը՝ փորձագետներ ներգրավելու հարցում: Ի լրումն, առաջարկում ենք, որ ցանկացած պարագայում դատավորների ընտրության գործընթացում փորձագետների ներգրավումը լինի պարտադիր՝ մրցութային կարգով և նախատեսված լինի Դատական օրենսգրքով:

Առաջարկ 1.2

Առաջարկում ենք հստակ կարգավորել փորձագետին վերաբերող հիմնական չափանիշները և նախատեսել, որ փորձագետ դառնալու հավակնություն կարող են ունենալ միայն այն անձինք, ովքեր ունեն առնվազն յոթ տարվա մասնագիտական փորձ հակակոռուպցիոն ոլորտում, մասնագիտական և փորձագիտական խորհրդատվություն/ծառայություն են մատուցել հակակոռուպցիոն և բարեվարքության հարցերի վերաբերյալ՝ ինչպես ազգային, ներառյալ՝ տարբեր առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների:

Առաջարկ 1.3

Միաժամանակ առաջարկում ենք հստակ սահմանել, որ փորձագետների թեկնածուներին պետք է առաջադրեն վերջին յոթ տարիներին հակակոռուպցիոն փորձառություն ունեցող տեղական հասարակական կազմակերպությունները՝ ապահովելով այս գործընթացում հանրային մասնակցությունը: Ընդ որում, տեղական հասարակական կազմակերպությունների յոթ տարվա մասնագիտական փորձառությունը պետք է ապացուցվի համապատասխան փաստաթղթերով և կատարած աշխատանքով, և ոչ թե միայն պետական գրանցում ունենալու և կանոնադրության մեջ որպես գործունեության ոլորտ հակակոռուպցիոն նշելու հանգամանքներով:

Առաջարկ 1.4

Առաջարկում ենք, որ հիշյալ փորձագետները լինեն ՀՀ քաղաքացի հանդիսացող ազգային և միջազգային փորձագետներ և փորձագետի պաշտոնում առաջադրվելու պահին չլինեն պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պետական ոչ առևտրային կազմակերպության, հանրային նշանակության կազմակերպության, այլ կազմակերպաիրավական ձև ունեցող, ներառյալ՝ դատական համակարգի հետ առնչություն ունեցող կառույցի աշխատող, ինչպես նաև հանրային ծառայություն մատուցող անձ:

Առաջարկ 1.5

Այն դեպքում, եթե փորձագետի թեկնածուն ունի գիտական աստիճան և/կամ կոչում, առաջարկում ենք, որ փորձագետի հավակնորդին ներկայացվի պահանջ առ այն, որպեսզի հրապարակվի վերջինիս գիտական աստիճանի և կոչումների մասին մանրամասն տեղեկություններ իր ինքնակենսագրականում (որը պետք է կազմի փորձագետի մրցութային փաթեթի մաս), ներառյալ ատենախոսության/ատենախոսությունների անվանումը (անվանումները) և դրա (դրանց) առցանց հղումը (հղումներ), ինչպես նաև գիտական կոչումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Կարգավորում 2.

Դատական օրենսգրքի նախագծի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Օրենքի 112-րդ հոդվածում լրացնել նոր կետ՝ 1.1.-րդ մաս՝ «1.1 Հակակոռուպցիոն դատարանի և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝ *(...) 2) որը, լինելով դատավոր կամ նախկին դատավոր, (...) որի կայացրած դատական ակտի վերաբերյալ առկա է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտ.»:*

Առաջարկ 2.

Առաջարկում ենք վերանայել սույն կարգավորումը, քանի որ ճիշտ չէ ՄԻԵԴ-ի վճիռը մեխանիկական և բացարձակ արգելք դիտարկել անձին հակակոռուպցիոն դատարանի դատավոր նշանակելու համար: Հաճախ ՄԻԵԴ-ի վճիռների կայացման համար հիմք են հանդիսանում թերի օրենսդրական կարգավորումները կամ օրինակ՝ ողջամիտ ժամկետների խախտումը, որը կարող է պայմանավորված չլինել դատավորի «մեղքով»: Նման պայմաններում, գտնում ենք, որ յուրաքանչյուր դեպքում պետք է բովանդակային գնահատման ենթարկվի ՄԻԵԴ-

ի վճիռը Բարձրագույն դատական խորհրդի կողմից անձին հակակոռուպցիոն դատարանի դատավոր նշանակելիս, սակայն բոլոր դեպքերում առաջարկում ենք այն չդիտարկել որպես բացարձակ արգելք։

Կարգավորում 3.

Նույն հոդվածով սահմանված է նաև՝ *«1.1 Հակակոռուպցիոն դատարանի և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝ (…) 5) որը, լինելով փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին հինգ տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն, մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների, տուգանք կամ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում կարգապահական տույժերից մեկը»:*

Առաջարկ 3.

Առաջարկում ենք հանել սույն կարգավորումը (չափանիշը), քանի որ եղել են դեպքեր, երբ մինչև 2018 թվականի Թավշյա հեղափոխությունը, որոշ բարեխիղճ և մասնագիտական բարձր կարողություններ ունեցող փաստաբաններ՝ հատկապես քաղաքական հնչեղություն ունեցող գործերով անհիմն կերպով ենթարկվել են կարգապահական պատասխանատվության տեսքով: Եվ ստացվում է որ սույն կարգավորումը Հակակոռուպցիոն դատարանի դատավորի պոտենցիալ թեկնածու հանդիսացող այդ բարեխիղճ և մասնագիտական բարձր կարողություններ ունեցող փաստաբանների համար արհեստական խոչընդոտներ և ոչ հավասար մրցակցային պայմաններ է ստեղծում մյուս թեկնածուների հետ համեմատ։

Կարգավորում 4.

Ի թիվս այլ կարգավորումների, Դատական օրենսգրքի նախագծի 15-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետով սահմանված է. «Հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ. *(…)* 4) չորրորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար մասնագիտական փորձառություն ունեցող հավակնորդին։»:

Առաջարկ 4.

Առաջարկում ենք, որ հավակնորդին ներկայացվի պահանջ առ այն, որպեսզի հրապարակվի վերջինիս գիտական աստիճանի և կոչումների մասին մանրամասն տեղեկություններ իր ինքնակենսագրականում (որը պետք է կազմեն հավակնորդի անձնական գործի մաս), ներառյալ ատենախոսության/ատենախոսությունների անվանումը (անվանումները) և դրա (դրանց) առցանց հղումը (հղումներ), ինչպես նաև գիտական կոչումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Կարգավորում 5.

Ի թիվս այլ կարգավորումների, Դատական օրենսգրքի նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդն այն ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում **խորհրդատվական եզրակացություն** ստանալու նպատակով: Հայտի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք անցնում են դատավորների թեկնածուների հավակնորդների ընտրության համար նախատեսված որակավորման ստուգման հարցազրույցի փուլը, որը կազմակերպվում է բարեվարքության վերաբերյալ **խորհրդատվական եզրակացությունը** ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Առաջարկ 5.

Նկատի ունենալով այն հանգամանքը որ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները չեն կրում պարտադիր բնույթ ԲԴԽ-ի համար (*նախագծով սահմանված է, որ Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ սույն օրենքով սահմանված ստուգման ենթակա հանգամանքների հետ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը*), իսկ Դատական օրենսգրքի նախագծով սահմանված չեն այդ եզրակացությունները չընդունելու հստակ հիմքեր, առաջարկում ենք սահմանել, որ դատավորի թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված խորհրդատվական եզրակացությունները ԲԴԽ-ի կողմից չընդունվելու դեպքում, հարկավոր է տրամադրել պատճառաբանված որոշում: Հիշյալ առաջարկը վերաբերում է նաև Դատական օրենսգրքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասում և 20-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված կարգավորումներին:

Կարգավորում 6.

Դատական օրենսգրքի նախագծի 21-րդ հոդվածի 14-րդ կետով սահմանված է՝ *«Բարձրագույն դատական խորհուրդը նախնական հարցազրույցից* ***երեք օր առաջ*** *փորձագետներին է տրամադրում հավակնորդների անձնական գործը, որում պետք է ներառվեն որակավորման ստուգմանը մասնակցելու հայտին կից հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր քննության արդյունքով ստացած միավորները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը և Օրենսգրքի 107-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները»:*

Առաջարկ 6.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի բացառվում ունենալ հավակնորդների մեծ թիվ, առաջարկում ենք երկարացնել հավակնորդի անձնական գործին ծանոթանալու համար փորձագետներին տրամադրված ժամկետները, որը կբարձրացնի այդ գործընթացի արդյունավետություն և կնպաստի բազմակողմանի ու օբյեկտիվ ուսումնասիրությանը:

Հիշյալ առաջարկը վերաբերում է նաև վերաբերում է նաև նույն հոդվածի **12-րդ կետով նախատեսված ժամկետներին:**

Կարգավորում 7.

Դատական օրենսգրքի նախագծի մի քանի հոդվածներով նախատեսված է, մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների հակակոռուպցիոն մասնագիտացում ունեցող դատավորների թեկնածուների ընտրության կարգը, հարցազրույցներ և զրույցներ:

Առաջարկ 7.

Առաջարկում ենք դատավորների ընտրության գործընթացին, այդ թվում՝ հարցազրույցների և զրույցների փուլում (բացառությամբ որոշումների կայացման դեպքերին) նախատեսել դիտորդների ինստիտուտ՝ ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Ի լրումն սույն առաջարկին, նախատեսել ԶԼՄ-ների իրավունքը՝ լուսաբանել և ուղիղ հեռարձակել ամբողջ գործընթացը՝ ապահովելով դրա թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Կարգավորում 8.

Ներկայումս «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված են վերապատրաստումներ միայն դատավորների համար։

Առաջարկ 8.1

Առաջարկում ենք մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով հատուկ վերապատրաստում նախատեսել ոչ միայն դատավորների, այլև նրանց օգնականների համար։

Առաջարկ 8.2

Առաջարկում ենք նաև մասնագիտացված դատարանները համալրել համապատասխան հակակոռուպցիոն մասնագիտացում ունեցող փորձագետներով, որոնց ներուժը կարող է էապես նպաստել այդ դատարանների արդարադատության իրականացման որակի և դատարանների արդյունավետության բարձրացմանը։

2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

Կարգավորում 1.

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով սահմանված է Հակակոռուպցիոն դատարանի դատավորի վարձատրությունը՝ պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները։

Առաջարկ 1.

Սոցիալական երաշխիքների տեսանկյունից, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն մարմինների համար աշխարհում նախատեսվում են սխնդիր։ Մասնավորապես, ըստ նախագծերի՝ աշխատավարձի գործակիցները համամասնությամբ բաշխված չեն **հակակոռուպցիոն կոմիտեի և հակակոռուպցիոն դատարանի աշխատակիցների միջև**։ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և քննիչի աշխատավարձերի գործակիցները համապատասխանաբար գերազանցում են հակակոռուպցիոն դատարանի

նախագահի և հակակոռուպցիոն դատարանի դատավորի աշխատավարձերի գործակիցներին, որպիսի մոտեցումն ճիշտ չէ և առաջարկում ենք պահպանել համամասնությունը։

3. «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Առաջարկ 1.

Առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դատարանի հասկացության մեջ ներառել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթը, ինչպես նաև վերանայել գործերի միացման և անջատման վերաբերյալ նախատեսվող հատուկ կարգավորումը։

4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Կարգավորում 1.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդվածով 1-ով սահմանված է՝ *«Օրենքի 26.1.-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5.1.-րդ կետ.*

«5.1. Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է նաև՝

1) անձի կայացրած դատական ակտի վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության.

(…)։»

Առաջարկ 1.

Առաջարկում ենք վերանայել այս կարգավորումը, և նախատեսել, որ Հանձնաժողովը ուսումնասիրելու է հակակոռուպցիոն վարքագծի և էթիկայի հետ կապված հարցերը, քանի որ միջազգային դատարանի կամ ատյանի կողմից կայացրած դատական ակտերի բովանդակային ստուգումը ավելի շատ մասնագիտական, քան՝ բարեվարքության գնահատական է, որը ներկայիս իրավական կարգավորումների համաձայն՝ ԲԴԽ գործառույթների տիրույթում է: